ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**
**ՈՐՈՇՈՒՄ**

**« 15 » սեպտեմբերի 2022 թվականի N -Ա**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 183/1 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉՎԱԾ 25.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Վարչական դատարանի 2018 թվականի ապրիլի 09-ի վարչական գործ թիվ ՎԴ5/0178/05/17 վճիռը և հարկադիր կատարումն ապահովող ծառայության Շիրակի մարզային բաժնի 2022 թվականի հունիսի 28-ի N 5442/20 գրությունը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի հունիսի 08-ին N 11725 թվագրմամբ) ՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացի Անահիտ Արարատի Գրիգորյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել Գյումրի քաղաքի Շահումյան փողոց N 183/1 հասցեի անշարժ գույքի հողամասից դատարանի վճիռի հիման վրա անվավեր ճանաչված 25,0 (քսանհինգ) քառակուսի մետր մակերեսով հողամասը:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի մինչև 2021 թվականի հունվարի 01-ը գործող կադաստրային արժեքով, որը կազմում է 1914 (մեկ հազար ինը հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 47850 (քառասունյոթ հազար ութ հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Անահիտ Արարատի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ա. Պապիկյան
Կ. Բադալյան
Հ. Գասպարյան
Ա. Չախոյան
Հ. Սահակյան

Կատարող՝ Հ.Սահակյան